ՄՈՒՐԱԴ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1930թ., Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: 1948թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Այն ավարտելուց հետո աշխատել է Լենինականի տարբեր դպրոցներում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1958-1964թթ. աշխատանքային գործունեությունը շարունակել է Լենինականի հղկող հաստոցների գործարանում՝ որպես ինժեներ, ինժեներ-տեխնոլոգ, տնօրենի տեղակալ:

1962թ. հեռակա կարգով ավարտել է Մոսկվայի մեքենաշինական ինստիտուտը:

1964-1965թթ. եղել է Լենինականի <<Միկրոէլեկտրաշարժիչ>> գործարանի տնօրենը, իսկ 1965-1967թթ.՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչը, ՀԿԿ կենտկոմի թեթև ու սննդի արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալը:

1967թ. Մ. Մուրադյանն ընտրվել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի երկրորդ, ապա՝ առաջին քարտուղար (1968-1975):

1975-ին ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ և պաշտոնավարել մինչև 1985 թվականը:

1985-1988թթ. ՀԿԿ կենտկոմի քարտուղարն էր, միաժամանակ շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի վարիչը:

1988-1990թթ. Հայկոոպի նախագահ էր:

Մ. Մուրադյանը եղել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր, պարգևատրվել է Լենինի շքանշանով:

2002թ. փետրվարին նրան շնորհվել է <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչումը: